ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ*

ՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԵՂՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ

«Հաւատամք զԵրրորդութիւնն Սուրբ՝մի բնութիւն,
մի աստուածութիւն. ոչ երեք աստուածք, այլ՝մի
Աստուած. մի կամք, մի թագաւորութիւն, մի
իշխանութիւն, արարիչ երեւելեաց,եւ աներեւութից»:
(Ժամագիրք)

Ս. Երրորդության վարդապետությունը (լատ. Trinitas) Քրիստոսի ընդհանրական եկեղեցու պատմության մեջ հաճախ է վիճաբանության, բաժանումների պատճառ եղել: Ս. Երրորդության երկրորդ անձի՝ Որդու բնության քննարկումները՝ քրիստոսաբանական վեճերը, Քաղկեդոնի ժողովից հետո տրոհեցին Եկեղեցին՝ քաղկեդոնական եւ ոչ քաղկեդոնական եկեղեցիների: Այդ դեպքերից մոտ հինգ հարյուր տարի հետո Ս. Երրորդության երրորդ անձի՝ Ս. Հոգու՝Հորից, թե Որդուց բխած լինելու հարցի քննարկումները՝նոր բաժանման պատճառ դարձան: Այսինքն՝ ստացվում է, որ Ս. Երրորդության խնդրի հետ կապված ցանկացած վիճաբանություն բաժանումներ է առաջացրել Եկեղեցում. այդպիսիք են, օրինակ, միապետական մոդալիզմը, սաբելականությունը, մակեդոնականները, արիոսականները՝ Եկեղեցու վաղ շրջանում, եւ վերջին ժամանակներում՝ սոցինյանականները, Եհովայի վկաները, պենտեկոստալ-միաղավանները եւ շատ ուրիշներ: Այդ ժամանակակից հակաերրորդական (antitrinitarian) հայացքներ տարածողները կարծում են, թե Երրորդության վարդապետությունը սատանան է մեջտեղ բերել, եւ մերժելի է: Ուստի ստորեւ կներկայացնենք հակաերրորդականների ընդունած այն սուրբգրային հիմնական համարները, որոնցով հիմնավորում են իրենց հայացքները[2]:

«Եհովայի վկաների» վարդապետության մեջ առկա են այնպիսի գաղափարներ, որ ուղղափառ քրիստոնյաների համար միանգամայն մերժելի են: Մասնավորաբար Աստծո ամենուրեքության խնդիրը, որի մասին ակնարկել էինք նախորդ հոդվածում:

Ա. «Եհովայի վկաների» պատկերացմամբ Աստված ամենակարող չէ, սահմանափակ է իր գործունեության մեջ:

---

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Ը.:

2 Կսահմանափակվենք միայն «Եհովայի վկաների» հիմնավորումների մի մասը ներկայացնելով:

Բրուկլինյան ասպվածաբանները պնդում են, որ Աստված միաժամանակ ամենուրեք գտնվել չի կարող, նա հոգի է, ունի հոգեւոր մարմին, որ սահմանափակ է տարածության մեջ: Նրանք Աստծուն նմանեցնում են էլեկտրականի հետ:

«Ավելի լավ հասկանալու համար կարելի է Աստծուն համեմատել էլեկտրականի հետ: Այն գտնվում է քաղաքի մի որոշակի տեղում: Բայց արտադրած էլեկտրականությունը բաշխվում է քաղաքի բոլոր մասերին՝ լուսավորություն եւ էներգիա մատակարարելով: Եհովա Աստծու պարագային էլ նույնն է: Նա գտնվում է վերին երկինքներում մի որոշակի տեղ, բայց Նրա գործուն ուժը, Նրա սուրբ հոգին հոգ է տանում ամենուրեք լուսավորելու եւ կարող է զգալի լինել ամբողջ տիեզերքում»[3]:

Սրան հակառակ քրիստոնեության մեջ ընդունված է Աստծու՝ որպես Տիեզերքի Արարչի, ամենուրեքության սկզբունքը (լատ. *omnipraesentia*, անգլ. *Omnipresence*), համաձայն որի Աստված դուրս է տարածությունից եւ ժամանակից, Նրան հնարավոր չէ տեղայնացնել: Նրանց այդ տարօրինակ հայացքները՝ Արարչի տեղայնացման մասին, ավելի աղերսներ ունեն հեթանոս ազգերի, գնոստիկների, վերջին ժամանակներում հայտնված մորմոնների, թեոսոֆների ուսմունքի հետ, քան՝ Ս. Գրքի: Այդպիսի հատկանիշերով, փաստորեն, Աստված սահմանափակված է իր մարմնի մեջ, կարող է միայն տեղաշարժվել տիեզերքում տեղից տեղ:

Բրուկլինյան վարդապետները հիմնավորում են իրենց այդ տեսակետը հետեւյալ կերպ.

«Աստծո ամենուրեքության ուսմունքի հետեւանքը եղավ այն, որ այսպես կոչված քրիստոնեությունը նրա մասին խառնաշփոթություն ստեղծեց, որը դժվարացրեց հավատացյալներին Նրան դիտարկել որպես իրականություն: Ինչպե՞ս կարող է Աստված միաժամանակ լինել ամենուրեք: Աստված հոգի է, իսկ դա նշանակում է, որ Նա ունի ոչ նյութական մարմին, հոգեւոր մարմին: Որպես հոգեւոր մարմին ունեցող անհատ, դեմք Աստված գտնվում է ինչ-որ մի տեղ եւ չի կարող, հետեւաբար, միեւնույն ժամանակ գտնվել մեկ այլ վայրում: Դրա համար էլ մենք կարդում ենք Գ. Թագ. 8:43-ում՝ «երկնքում, Քո բնակության վայրից»: Ստեփանոս աշակերտը եւ Հովհաննես առաքյալը տեսիլքներ տեսան երկնքում, որտեղ նրանք Աստծուն եւ Հիսուս Քրիստոսին տեսան: Եհովա Աստվածը, հետեւաբար, պետք է լիներ դեմք, անհատականություն, ինչպես Հիսուս Քրիստոս (Գործք 7:56, Հայտն. 5:1, 9): Այն քրիստոնյաները, որոնք հույս ունեն մեկ անգամ երկնքում ապրելու, համոզված են, որ կտեսնեն Աստծուն եւ կնմանվեն Նրան, իսկ դա ցույց է տալիս, որ Եհովա Աստվածը իրոք դեմք է համարվում, ունի մարմին, եւ գտնվում որոշակի տեղում (Ա. Հովհ. 3:2)»[4]:

---

3 «Դիտարան», 01.04.1982, էջ 6: Զարմանալի է, բայց «Եհովայի վկաների» հիմնադիր-նախագահը ավելի ճշգրիտ է նշում Եհովայի «բնակավայրի» տեղը, «Բազումք համաստեղությունը Եհովայի բնակատեղի համար շատ հարմար է, դա այն տեղն է, որտեղից նա ղեկավարում է տիեզերքը» («Դիտարան», 15.06.1915, էջ 5710): Նույնն են կրկնել նաեւ նրա հաջորդները, օրինակ, Ռուտերֆորդը. «Մի անգամ մեկն ինձ հարցրեց. "Եթե դուք հայտնվեիք 1925 թվականին, ի՞նչ կանեիք": Ես ասացի. "Ես հավատում եմ, որ դեռ մինչ այդ ես կլինեմ տանը՝ Բազումք համաստեղությունում"» («Դիտարան», 01 նոյեմբերի.1920, էջ 334) :

4 «Դիտարան», 01.04.1982, էջ 5, 6:

Բրուկլինյան այս «մեկնության» մեջ առկա են հետեւյալ հիմնական դրույթները.

ա. Քրիստոնեությունը խառնաշփոթություն է ստեղծել.

բ. Աստված գտնվում է Տիեզերքի որոշակի մի վայրում եւ միաժամանակ չի կարող մի քանի վայրում գտնվել.

գ. Աստված ունի հոգեւոր մարմին.

դ. Ստեփանոսը տեսել է Աստծուն երկնքում, եւ քրիստոնյաները երկնային հուսով կտեսնեն Աստծուն, քանի որ Նա սահմանափակ է, ամենուրեք չէ.

ե. Ս. Գրքում գրված է, որ երկինքն Աստծու բնակության վայրն է[5]:

Այս հարցադրումները հեշտությամբ կարելի է հերքել:

Նախ Ընդհանրական եկեղեցին իր երկուհազարամյա պատմության ընթացքում երբեք խառնաշփոթություն չի ստեղծել ամենուրեքության հարցում. միլիարդավոր քրիստոնյաների համար թե՛ անցյալում եւ թե՛ ներկայում ամենուրեքության սկզբունքը չի խանգարել Աստծու իրականությունն ընդունելու եւ Նրանով ապրելու: Եւ այսօր ընդամենը մի քանի միլիոն վկաներն են, որոնց համար քրիստոնեական այդ սկզբունքը անընդունելի է: Իսկ սուրբգրային այն համարները, որտեղ ամենուրեքությունը բացահայտ կերպով շեշտվում է, նրանք ուղղակի անտեսում են, կամ պնդում, թե այդ գրվածը ամենեւին էլ այդ չի նշանակում[6]:

Հղում տալով Եսայի ԿՁ. 1 համարին նրանք համոզում են, որ «Երկինքն իմ աթոռն է» նշանակում է, որ մարգարեն բնակավայրն է ցույց տալիս: Այստեղ, անշուշտ, միտումնավոր կերպով բաց են թողնում այդ համարի շարունակությունը. «եւ երկիրը իմ ոտքերի պատվանդանը»: Սա նշանակում է, որ բրուկլինյան տրամբանությամբ կարելի է եզրակացնել, որ Աստված ոտքեր էլ ունի - nonsense:

Ինչքան էլ փորձենք հոգի - τὸ πνεῦμα հունարեն բառի տարբեր իմաստները[7] փնտրել, ոչ մի նշանակության մեջ չենք գտնի սահմանափակ լինելու ակնարկներ: Ինչպե՞ս կարելի *քամին* սահմանափակել, մարմնի տեսք տալ: Ավետարանն ասում է՝ Աստված *հոգի* է եւ չի ասում *հոգեւոր մարմին* է:

Աստծուն տեսնելու պարագաներում բրուկլինյան ուսուցիչները բերում են հետեւյալ համարները.

«Ահա ես տեսնում եմ երկինքը բացված եւ մարդու Որդուն՝ Աստծու աջ կողմում կանգնած» (Գործք 7:56, ՆԱԹ):

Այստեղից ամենեւին չի հետեւում, թե Ստեփանոսը տեսավ Աստծուն, Աստված Հոգի է եւ չունի աջ, ձախ, վերեւ կամ ներքեւ կողմեր: Տեքստը բառացի հուշում է, որ Ստեփանո-

5 Այս կարգի հարցերը լավագույնս շոշափել է Ի. Սկերցոն, իր «Тайное царство Сторожевой Башни, Разоблачение Свидетелей Иеговы » գրքի «Троица» գլխում, էլեկտրոնային տարբերակը տես http://askforbiblie.by.ru-ում:

6 «Սաղմոս 138: 7-12 մարգարեական համարներից չի հետեւում, որ Աստված ամենուրեք է, որ Ինքն անձամբ ներկա է բոլոր ժամանակների մեջ եւ բոլոր տեղերում: Գիրքը պարզորոշ հակառակն է ասում (Բ. Օր. 26:15, Երբ. 9:24)» («Դիտարան», 01 հոկտեմբերի.1993, էջ 4) :

7 հոգի, ոգի, քամի, շունչ, կյանքի հոգի, փչում եւ այլն:

սը տեսավ Հիսուսին կանգնած՝ Աստծո աջ կողմում եւ ոչ թե Աստծուն: Աստծո աջ կողմը միանգամայն տեղի իմաստ ցույց չի տալիս, այլ՝ ենթակայության իմաստն է արտահայտում (subordination):

«Սիրելիներ, հիմա մենք Աստծու զավակներ ենք, սակայն մեզ դեռ հայտնի չէ, թե ինչպիսին ենք լինելու ապագայում: Գիտենք, որ երբ նա հայտնվի, մենք նրա նման կլինենք, որովհետեւ կտեսնենք նրան այնպես, ինչպես որ կա» (Ա. Յովհ. 3:2, ՆԱԹ):

Այս համարից եզրակացնում են, որ եթե հնարավոր է Աստծուն տեսնել, դա արդեն նշանակում է Նրա սահմանափակություն: Մինչդեռ այստեղ ակնարկը ոչ թե Հորն է վերաբերում, այլ Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Դա պարզ հասկացվում է նույն գլխի հինգերորդ համարում. «Դուք նաեւ գիտեք, որ նա հայտնվեց, որպեսզի հեռացնի մեր մեղքերը, ու նրա մեջ մեղք չկա» (Ա. Յովհ. 3:5, ՆԱԹ):

Եւ վերջապես, Գ. Թագ. Ը. 43-ում արտահայտությունը ամենեւին չի նշանակում, որ Աստված բնակվում է միայն այդտեղ, իսկ Տաճարը, որ պիտի կառուցեր Սողոմոնը Նրա բնակության համար չէր, այլ Նրա անվան. «եւ իմանան, որ Քո անվամբ է կոչվել իմ կառուցած այս տունը» (Գ. Թագ. Ը. 43): Չէ որ «երկինքն ու երկնքի անսահմանությունները քեզ բավական չեն, ապա ինչպես կարող է բավականացնել իմ այս շինած տունը» (Գ. Թագ. Ը. 27):

(Շարունակելի)

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ